ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԱՐԼԻՎԱՉ ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-17 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	ԱՐԼԻՎԱՉ ՍՊԸ	ներքին շերտավար ագույրներ	ԱՐԼԻՎԱՉ ՍՊԸ	"Գիշեր-ցերեկ տեսակի գալարավարագույրը բաղկացած է ալյումինե խողովակից, կտորից և պտտող մեխանիզմից և քիվից: Գիշեր-ցերեկ տեսակի գալարավարագույրի կտորը երկկողմանի ամրացվում է ալյումինե խողովակին և մեխանիզմի միջոցով պտտվելով իջնում, բարձրանում է՝ հավաքվելով վերևում այլումինե խողովակի վրա: Այն ամրացվում է պատին կամ առաստաղին ամրակների միջոցով: Ալյումինե խողովակի տրամաչափն առնվազն՝ 28 մմ: Գալարավարագույրի կտորը պատրաստված է պոլիէսթերից, ներկված և ներծծված է հատուկ բաղադրության նյութերով՝ արևից պաշտպանելու համար: Կտորը կազմված է հորիզոնական հաստ գծերով թափանցիկ և անթափանց զուգահեռվող մասերից, որոնց շղթան քաշելիս հայտնվում են մեկը մյուսի վրա և

				ապահովում ցանկալի լուսաթափանցելիություն և տեսադաշտ: Գործվածքը և գույնը համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Ապրանքի մատակարարումն իրականացվում է Պատվիրատուի կողմից տրամադրված հայտերի հիման վրա, որը ծանուցվում է Մատակարարի կողմից տրամադրված հեռախոսակապի միջոցով (զանգ/հաղորդագրություն) կամ էլեկտրոնային փոստի հասցեին: Չափագրումը, տեղադրումը, տեղափոխումը, բեռնաթափումը՝ ըստ Պատվիրատուի հասցեի իրականացվում է Մատակարարի կողմից: - ՀՀ ՆԳՆ Երևան քաղաքի ստորաբաժանումներում չափագրումը 2 աշխատանքային օրվա ընթացքում, պատրաստումը և տեղադրումը մատակարարի կողմից 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ ՀՀ մարզերում տեղակայված ստորաբաժանումներում չափագրումը 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատրաստումը և տեղադրումը մատակարարի կողմից 5 աշխատանքային օրվա ընթացքում: Ապրանքի համար երաշխիքային ժամկետը 365 օր, հաշված մատակարարման օրվանից, երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները շտկվում են տեղում: "

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

АРЛИВАЧ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-17 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
3				